

ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ -

ԾՆՆԴՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ 1907

Այսօր մենք ձեռքի թերեւ շարժումով միացնում ենք նեռուստացույցն ու երկնագույն էլեկտրակի վրա դիտում մեզանից տասնյակ ու հարյուրավոր կիլոմետրերի վրա գտնվող կայսեր հաղորդումները: Իսկ մեզանից ո՞ւմ է հայտնի այդ երաշալի զյուտի նեղինակը: Պատասխանել դժվարանում են նոյնիկ մասնագետները: Արովինտեւ նա մեկը չէ: Հեռուստահաղորդման ժամանակակից տեխնիկան բազմարիվ զիտնականների համար ու երկարան աշխատանքի արդյունք է:

Բայց, եթե դժվար է տալ սեպիտակ նեռուստահաղորդման հայտնագործողի անունը, այս գումարինը հայտնի է. Հովհաննես Արքարի Աղամյան: Սակայն մեր նապատակը չէ միայն ժանրացնել ընթերցողին Աղամյանի անվան նետ (այն վաղուց է հայտնի, թեև պետք է խոսունանել, որ նա չունի իր վաստակին համարժեք համբավը*): Բանն այն է, որ գրականուրյան մեջ գումարու նեռուստանուրյան զյուտը վերագրում են 1925 թվականին: Ժիշտ է 1925 թ. Հ. Աղամյանը տվել է գումարու նեռուստահաղորդման սկզբունքը**, իիրառելով երեք գույն, որոնց օպակիական միախառնումից ստացվում էն մյուս բայց գույններն ու երանգները: Բայց չէ որ այդ զյուտը փոփ-ինչ այլ ձևով նա առաջարկել է դրանից ավելի ժամ մեկուկես տասնամյակ առաջ՝ 1907 թվականին: Այդ ժամանակ, սակայն, պատկերի երանգավորումը նա կատարել է երկու կոմպոնենտով: Ինչ խոսք, 1925 թ. զյուտի համեմատուրյամբ սա ավելի անկատար է, քայլ 1925 թվակա-



2. Աղամյանի 1907 թվականի զյուտի ֆոտոպանենք: Աղամյանի 1907 թվականի զյուտի ֆոտոպանենքը համապատակ է Ա. Թովմանյանի («Թնագիտուրյան և տեխնիկայի պատմուրյունից», զիտնական աշխատուրյունների ժողովածու, Խ, 1962):

* Հ. Աղամյանի աշխատուրյունների զիտնական վերլուծուրյամբ գրադիտ է Ա. Թովմանյան («Թնագիտուրյան և տեխնիկայի պատմուրյունից», զիտնական աշխատուրյունների ժողովածու, Խ, 1962):

** Մինչև 1953 թ. գումարու նեռուստանուրյունը ԱՄՆ-ում գործել է Հ. Աղամյանի այդ սկզբանեանը:

Հինն էլ թերի է այսօրվա հեռուստատեսուրյան համեմատուրյամբ: Զէ ու կարեռը սկզբունքն է: Այս խմասոով էլ գունավոր հեռուստատեսուրյան գյուղի բվականը պետք է համարել 1907-ը: Սառեւ տպագրում ենք Հ. Ադամյանի այդ գյուտի պատենտը, որ տրվել է Գերմանիայում 1908 բվականին:

ՊԱՏԵՆՏԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

ՊԱՏԵՆՏ

N 197183

Դաս 21ա Խումբ 32/52 •

Հասպարակված է 1908 թ. մարտի 31-ին

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԴԱՄՅԱՆ, ՎԻԼՄԵՐՍԴՈՐՖ, ԲԵՌԼԻՆԻ ՄՈՏ:

Հարմարանք, որն օսցիլոգրաֆի հայելուց անդրադարձված լուսային փնջի տեղական տատանումները փոխարկում է Հայլերի փողակի պայծառության տատանումների:

Պատճնտավորված է Գերմանական կայսրությունում 1907 թ. հուլիսի 12-ին:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԳԱՐԻ ԱԴԱՄՅԱՆ

Հովհաննես Աբգարի Ադամյանը ծնվել է 1879 թ. փետրվարի 5 (17-ին) Բաքվում, վաճառականի ընտանիքում:

Գյուտարարությունը վերաբերում է Էլեկտրական հեռուստացույցին, այսինքն՝ աշնայիսի հարմարանքների, որոնցում տեսանելի պատկերի առանձին կետերի տարրեր պայծառությունները օգտագործվում են Էլեկտրական շղթայի հոսանքի տատանումները էլեկտրական գծի հոսանքու կետին հասցնելու համար, նպատակ ունենալով հոսանքի տատանումները փոխարկել լուսային աղբյուրի պայծառության տատանումների, միևնույն ժամանակ կարող է օգտագործվել հաղորդիչում եղած տեսանելի պատկերը ընդունիչ կետին հաղորդելու համար:


Հայտնի է, որ սելենային մի քանի փորք էլեմենտների օգնությամբ (որոնք դասավորված են շախմատաձև և հաջորդականընքն ու մեծ արագությամբ լուսավորվում են պատկերի առանձին կետերի կամ էլեմենտների կողմից) կարելի է պատկերի օպտիկական ընդհանուր տպավորությունը, ըստ ժամանակի, տարրալուծել մի շաբաթ մեկը մյուսին հաջորդող հոսանքի տատանումների և դրանց միջոցով աղղել զգայունակ դաշտանոմետրի կամ օսցիլոգրաֆի վրա: Հոսանքի այդ տատանումները գալվանոմետրի կամ օսցիլոգրաֆի հայելու միջոցով նախապես տարրալուծվում են տարածական տատանումների, որոնք ստացվում են ցանկացած ուժի լույսի աղբյուրից և կող հառագայթների փելքից:

Գյուղական իրենից ներկայացնում է մի սարք, որի օգնությամբ լույսի տառագայթների այլպիսի փնտի անկյունային տառանումները ընդունելով փոխարկվում են լույսի մեկ կամ մի քանի ազդյուրների ինտենսիվության տառանումների, այսինքն՝ Հայլերի փողակների տառանումների, որից հետո, այդ տառանումները մեզ հայտնի ձևով կարող են գումարվել այնպիս, որ հաղորդիչ ապարատի կողմից ընդունված պատկերը վերարտադրվի ընդունիչ ապարատում և մատչելի լինի աշքին կամ լուսանկարչական լոցիկին:

Ստորև նկարագրված պատկերների ընդունիչում զերադասարար կիրառվում են լույսի տարրեր գույների երկու ազդյուրներ, օրինակ, սպիտակ և կարմիր, ընդունում առավել բաց գույնի երանգները փոխանցվում են լույսի մեկ ազդյուրից՝ սպիտակ երանգով, իսկ նրավագ բաց գույները մյուս ազդյուրից՝ կարմիր կամ կարմրավուն երանգով: Այս դեպքում վերադասիլի է հաղորդել մարդու զեմքի պատճերը, որի բնական գույնը՝ գույների վերոհիշյալ աստիճանավորման օգնությամբ որոշ շափով ընդորինակվում է:

Դապրում արված է պատկերների հաղորդելու համար առաջարկվող ընդունիչի սարք:

Այստեղ, 1, 1—հաղորդաւարն է, որով անցնում են հոսանքի իմպուլսներ՝ պատկերի առանձին էլեմենտների պայմանությամբ աստիճաններին համապատասխան: 2-ը ձգված փաթույթային լարն է, 3-ը Սիմենսի սոցիլոգրաֆի հայելին: 4-ը լույսի ազդյուրն է, օրինակ, աղեղնային լամպ, 5-ը ոսպնյակն է, որի միջով



լույսի փունքն ուղղվում է հայելուն (3) և վերշինից անդրադառնում սեղնային էլեմենտների (6, 7) սիստեմի մակերեսի վրա:

Սեղնային էլեմենտները հիմնականում բաժանվում են երկու խմբի, որոնք զառապորված են լույսի ազդյուրից (4) գնացող և հայելու (3) միջով անցնել հառագայթների փնչի ձևապարհի ուղղությամբ: Ցուրաքանչյուր էլեմենտի մի ծայրը միացված է հաղորդաւարին (8), որի միջոցով բոլոր էլեմենտները միացված են ինդուկտորի երկրորդային կոճի (9) սեղմակներից մեկին: 17—21 թվերով նշված ապարատուրան-

Հայրը Արգար Սահակի Աղամյանցը եղել է երաժշտության սիրահար և զրեթե չի պաղվել առևտրական զործերով, բողնելով դրանք եղբայրների վրա:

Մայրը՝ Մարգարիտ Հովհաննեսի Աղամյանցը իր շրջապատում հայտնի է եղել որպես բնածին խելքի և նույր ճաշակի տեր անձնալորություն: Լավ հասկանալով ուսման կարևորությունը, նա աշխատել է ամուսնու նյութական կարողությունը օգտագործել իր զավակներին բարձրագույն կրթություն տալու համար:

1897 թվականին Աղամյանը ավարտում է Բարձի ռեալական դպրոցը և երկու տարի անց ընդունվում Մլունիսինի (Գերմանիա) Լյուդվիգ Մարտիմիլիանի անվան համալսարանը: Այստեղ մեկ սեմեստր սովորելուց հետո տեղափոխվում է Շվեյցարիա և մինչև 1901 թ. ուսանում Ցյուրիխի ֆիլիսոփայական ֆակուլտետի բիմիական բաժնում:

Այնուհետև Աղամյանին մենք հանդիպում ենք Բեռլինի համալսարանում որպես ակադեմիական ֆակուլտետի մասնագիտական համակարգի մասնագիտություն:

Պետք է ենթադրել, որ այստեղ նա ավարտում է իր բարձրագույն կրթությունը և ստանում ինձնելու-էլեկտրիկի մասնագիտություն:

Ըստանելան նամակներից տեղեկանում ենք, որ Հ. Աղամյանը եղել է բազմակողմանի զարգացած և արտակարգ ընդունակությունների տեր մարդ: Ուսումնասիրել է երաժշտություն, էսթետիկա, ճարտարապետություն: Եղել է սովոր շախմատիստ, ու սրամիտ ծաղրանկարիչ և իր ծաղրանկարներում մեծ տեղ է հատկացրել պրուսական լունկերների կայվերական փրվածքաբերին:

Ակներն է, որ ուսումը Գերմանիայում և եվրոպական այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում երիտասարդ Աղամյանի համար չի եղել սովոր մասնագիտական կրթություն: Կառակա չի կարող լինել, որ դեռևս ուսանողական տարիներին Հ. Աղամյանը տարված է եղել գույնագործական մոքերով:

Եվ ահա, 1907 թվականին 28 տարեկան Ադամյանը Բեօլինում ստանում է իր առաջին գյուտի վկայագիրը, որն աշխարհին ապդարարում է գունավոր նեռուստատեսության առաջին խոսքը:

1913 թվականին Ադամյանը վերջնականացնելու բողոքում է Գերմանիան, փոխադրվում Ռուսաստան և Մշտական բնակություն հաստատում Պետերբուրգում: Այսուեղան, նույնական, ինչպես և Գերմանիայում, իր միջոցներով նա ստեղծում է լաբորատորիա և շարունակում գյուտարարական աշխատանքները:

Սակայն Ադամյանի գործունեության բեղմնավոր շրջանը սկսվում է ստիտական տարիներին, երբ նրա առջև բացվում են գիտական մտահղացումների և դրանց իրագործման լայն հնարավորություններ:

Այդ ասիթով, 1920 թվականին Լենինգրադից Բեօլին բրոզ հասցեազրած նամակներից մեկում Ադամյանը գրում է. «Ստեղծագործական աշխատանքի երջանկությունը ես զգացի միայն այսուեղ, և այժմ եմ բախտավոր եմ ու գոր իմ երազանքներից և իդերից»:

Մինչև այժմ հայտնի փաստաթղթերից պարզվում է, որ իր գիտական կյանքի կարճ ժամանակաշրջացքում Ադամյանը տվել է 20 գյուտ և առաջարկություն:

Գիտության ու տեխնիկային արժեքավոր շատ գործեր կարող եր տալ ստեղծագործական անսահման ավլունով լի այդ տաղանդավոր մարդը, բայց անողոր մահը կարծեց նրա կյանքը, թողնելով բազմաթիվ գիտական մորեր կիսավարտ և սաղմանային վիճակում:

Հ. Ադամյանը վախճանվեց 1932 թվականին սեպտեմբերի 12-ին Լենինգրադում և թաղվեց Լենինգրադի հայկական գերեզմանատանը:

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

պատկերում է Տևոլայի հանրածանոթ տրանսֆորմատուր՝ շատ բարձր հաճախականության և բարձր բարձր հոսանքներ ստանալու համար: Առանձին խմբերում, սելենային էլեմենտների աղաւատ ծայրերը նույնականացված են զուգահեռ՝ յուրաքանչյուրը մի հաղորդակարերը միանում են Հայսլերի փողակների (12,13) սեղմակներին: Նույն փողակների մյուս սեղմակները նորից միացված են հետադարձ հաղորդակարին (14), որը զընում է զեպի կոնդուկտորային կոճի (9) աղաւատներու Հայսլերի փողակները դասավորված են դիոպտրի (25) դիմաց, որի առջևի ծայրը ծածկված է սկավառակով (24). Վերջինի մեջ կան պարուրաձև դասավորված անցքեր (22): Հայսլերի փողակը (12) պատրաստված է թափանցիկ ապակուց, ուստի գրգռված վիճակում նա հիմնականում արձակում է սպիտակ գույն, մինչդեռ մյուս խողովակը (13) պատրաստված է կարմիր ապակուց: Լույսի գունավորումը կարելի է ստանալ, ընտրելով գազերը խողովակների մեջ լցնելու համապատասխան եղանակ:

Սելենային էլեմենտներն ունեն այնպիսի համաշափություն, որ լուսավորված վիճակում անդամ, դրանց էլեկտրական դիմադրությունը փոփոխվում է աստիճանաբար՝ սիստեմի մի ծայրից զեպի մյուս ծայրից ուղղությամբ: Բոլոր էլեմենտները կարող են դասավորված լինել նաև միատեսակ, սակայն, այս դեպքում յուրաքանչյուր առանձին էլեմենտը միացնող հաղորդակարին միացվում են դիմադրություններ, որոնք իրենցից ներկայացնում են համապատասխան ստիճանավորումները:

Նկարագրված սարքը գործում է հետևյալ կերպությունը: Հաղորդակարով (1) անցնում են հոսանքի ստատանումները, հայելին (3) և դրա հետ միասին լամպից (4) ճառագայթվող լույսի փունջը, համապատասխարար շեղվում են: Եթե հայելուն տրվի, օրինակ, մի այնպիսի դիրք, որ նրա անշարժ վիճակում լույսի փունջը լուսավորի սելենային էլեմենտներից և ոչ մեկը, ապա զծագրում պատկերված ապարատի հավաքածան ձևով հնարավոր կլինի հաղորդել պայմանավորված հիմքում տարրեր աստիճանները նայած այն բանին, թե լույսի փունջը լուսավորում է էլեմենտների առաջին կամ երկրորդ խմբի առաջին կամ երկրորդ էլեմենտը, ըստ այնմ էլ փոխվում է վերջիններիս ամրող սիստեմի դիմադրությունը, ընդ որում որքան լույսի ճառագայթմների փունջը շեղվում է զեպի աչ, այնքան թուլանում է դիմադրությունը: Հայսլերի երկու փողակներու հոսող և դրանց լուսարձակումը պայմանավորված սաները նվազում կամ աճում է էլեմենտների սիստեմի դիմադրությանը հակադարձ: Բացի այդ, փոխվում է նաև ճառագայթվող լույսի գույնը:

Եթե լուսավորված էլեմենտների դիմադրությունները ընտրել այնպես, որ գրեթե հոսանքը լանցինի-